

ԶՈՐԱՅՐ ԽԱԼԱՓՅԱՆԻ «ԱՐԱ ԳԵՂԵՑԻԿ ԵՎ ՇԱՄԻՐԱՄ» ՍԻՐԱՎԵՊԸ

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

*Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԲՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ*

Լ. Վ. ՆԵՐՍԻՍՅԱՆ

*ԳՊՀ բանասիրական ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն»
բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանողուհի*

Հայ անվանի գրող Զորայր Խալափյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ» սիրավեպը լույս է տեսել 1998 թվականին: Վեպի հիմքում «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելն է:

Առասպելը ժողովրդական բանահյուսության վիպերգական ժանրերից մեկն է, որի մեջ գերբնական ու չափազանցված ձևով արտացոլվել են հնագույն ժողովուրդների կյանքի կարևորագույն դեպքերը, աշխարհի վերաբերյալ մարդկանց պատկերացումներն ու ընկալումները¹: Մովսես Խորենացու «Հայոց պատմության» շնորհիվ պահպանվել և մեզ են հասել հայ ժողովրդի ստեղծած վիպերգերն ու առասպելները: Առասպելներից շատերը հետագայում ենթարկվում են գրական մշակման, ինչպես «Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը, որից ոգեշնչված Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը, Վահան Թեքեյանը, Գևորգ Էմինը գրել են բանաստեղծություններ, Նաիրի Ջարյանը՝ դիցապատմական ողբերգություն, Գրիգոր Եղիազարյանը՝ համանուն բալետ, Վարդգես Սուրենյանցը պատկերել է կտավի վրա, իսկ ահա Զորայր Խալափյանը գրել է իր բնորոշմամբ «պատմաէրոտիկ» սիրավեպ: Պահպանելով որոշ տվյալներ՝ Զորայր Խալափյանը մեծամասամբ շեղվել է առասպելի սյուժեից: Հեղինակի խոսքով՝ իր նպատակն էր ցույց տալ՝ ինչպես է սերը աշխարհ եկել, և ինչպես է առաջացել առաջին համբույրը:

Թեև վեպը կոչվում է «Արա Գեղեցիկ և Շամիրամ», բայց տիրապետող դեմքն այնտեղ Շամիրամն է թե՛ իր գործերով. թե՛ վարքագծով: Եվ ահա Շամիրամի, կարելի է ասել, բազմաշերտ կերպարում Խալափյանին հատկապես գրավել է Արա Գեղեցիկի նկատմամբ նրա տաժաճ սիրո պատմությունը, որը գայթակղության քար է դարձել հայ և օտարազգի շատ արվեստագետների համար: Գրողը փորձել է նոր

¹ Տե՛ս Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010, էջ 112:

հայացքով նայել պատմիչների սուբյեկտիվության կնիքը կրող Շամիրամի և Արա Գեղեցիկի սիրո պատմությանը: Խալափյանի սիրավեպում Շամիրամը դիտվում է իբրև սիրո և կանացիության խորհրդանիշ՝ բնականաբար տեղադրված պատմական դարաշրջանի բարձրի ու ըմբռնումների շրջանակում:

Գրողն առանձին իմաստ է հաղորդում Շամիրամի ծնունդին, որը արժանացել է նաև պատմիչների հատուկ ուշադրությանը: Նա ծնվել է պտղաբերության աստվածուհի Դերկետոյի ինքնամոռաց սիրո հետևանքով, արսինքն՝ իր մեջ արդեն կրում է ճակատագրով և աստվածների կամքով շնորհված զգացումը: Դա սերն է. Աֆրոդիտեի պատիժն ու շնորհը միաժամանակ: Շամիրամը ծնված օրից մայրական սեր չի տեսնում և դառնում է զգացմունքներից զուրկ էակ: Նա մեծանում է հովիվների մոտ, սակայն բախտը նրան մի օր ժպտում է: Պալատական Օնեսը, տեսնելով Շամիրամին , սիրահարվում է և կնության առնում: Այսպես նա դառնում է առաջին մարդը, որ սիրելու զգացողություն է ունենում, սակայն պալատում Ասորեստանի թագավոր Նինոսին տեսնելով՝ Շամիրամը Օնեսին համարում է նախկին ամուսին և նստում Նինոսի կողքին՝ որպես նրա կին: Շամիրամը ամեն անգամ փորձում է սիրել, բայց ոչ ոք նրան չի գրավում, նա նույնիսկ չի կարողանում սիրել սեփական որդուն՝ Զամեսեսին, և միայն Արայի հայտնվելով՝ փոխվում է ամեն ինչ: Քարսիրտ թվացող այս կինը հանկարծ խելագարի պես սիրահարվում է: Նա ամուսնուն և որդուն գցում է լաբիրինթոս, որպեսզի ոչ ոք չխանգարի նրա և Արա Գեղեցիկի սիրուն: Շամիրամի սերը այնպես է կուրացնում Արային, որ նա մոռանում է և՛ ծնողներին, և՛ հայրենիքը: Նաիրի Զարյանի դիցապատմական ողբերգության մեջ Շամիրամը մարդկային կրքերով օժտված, վավաշոտ մի բռնակալ է, որ կարող է զայրանալ, երբ Արան մերժում է իրեն, իսկ Խալափյանի վեպում անընդհատ զարգանում, խորանում է այս կերպարի աստվածային ծագումն ու բնույթը հաստատող գիծը: Դառնալով թագուհի՝ նա հովանավորում ու խրախուսում է իր նաժիշտների սիրային արկածները, ինչպես սիրո հովանավոր մի աստվածուհի, խանդում է Նինոսի կանանց հավատարմությունն իրենց ամուսնուն և նույնիսկ նրանց դրդում անհավատարմության: Սա կերպարի նոր մեկնակերպ է: Ինչպես դիպուկ նկատել է գրականագետ Ս. Մարգարյանը, Խալափյանն այս վեպում «սիրո զգացմունքի տարերքը»

հասցնում է «մինչև կեցության բացարձակ հասկացության»¹: Շամիրամը, ըստ այս սիրավեպի, առաջին անգամ սեր է բերում աշխարհ, բայց սերը դեռ չի ճանաչում, և այսպես է Խալափյանը բացատրում նրա անհագուրդ կիրքն ու ցանկասիրությունը. մինչև սիրո լույս աշխարհ գալը սերը շփոթել են կրքի հետ: Այդպես է սիրո էությունը գեղեցկուհի խեթուհին բացատրում սիրուց անտեղյակ Արային. «Ես կրքով վառյալ եմ ընդ քեզ»: Շամիրամը չի հագնում, որովհետև փնտրում է, ձգտում է գտնել ու ճանաչել սերը, և ճանաչելուց հետո նա հավատարիմ կին է, հավատարիմ է իր Արային: Եվ դրա համար էլ մինչև Արային հանդիպելը նա մահ է բերում բոլոր նրանց, ովքեր սիրել են իրեն: Մահը և այս կերպարը նույնական են դառնում:

Սիրո զգացումը Խալափյանը կապում է կնոջ գոյության հետ. որն այն բերում է բնությունից իբրև իր սեռին բնորոշ հատկանիշ: Այստեղ է. որ Շամիրամի *կերպարը* անհասից վերաճում է կանացիության խորհրդանիշի, ընդհանրապես կնոջ, որի դերը սիրո տարածումն է մարդկանց մեջ:

«Ո՛վ մայր, եթե դու ես ինչպես երևում ես, դու ինձ աշխարհ բերեցիր, որպեսզի սերն ինձնով տարածվի», - դիմում է Շամիրամը աներևույթ աստվածուհի մորը: Շամիրամի հանդեպ Խորենացու ժխտողական վերաբերմունքը ակնառու է և միանգամայն հասկանալի: Պատմիչը դատապարտում է Շամիրամին և՛ այն բանի համար, որ նա մոլեգին տռփանք է տածում Արայի հանդեպ, և՛ նրա համար, որ այդ մոլեգնությունն ուղղված էր Արայի՝ հայոց արքայազնի հանդեպ: Խորենացու վերաբերմունքի մեջ ղրսևորվել է և՛ քրիստոնեական բարոյականության հավատարմությունը, և՛ հայոց պատմիչի հայրենասիրությունը²: Զորայր Խալափյանը կարծես թե արդարացնում է իր հերոսուհուն, նրա արարքների դրդապատճառ համարելով սերը: Եթե Մովսես Խորենացին Արա Գեղեցիկի մեջ ավելի շատ դնում է հայրենասիրական զգացողություններ, Խալափյանը իր վեպով ապացուցում է, որ սերը ի վիճակի է հաղթել բոլոր զգացողություններին: Խորենացու հերոսը հայրենիքը սիրուց վեր է դասում, իսկ ահա

¹ Ղազարյան Լ., Զորայր Խալափյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վեպը, «Գրականագիտական հանդես», Երևան, 2015, էջ 191:

² Քալանթարյան Ժ., Հին առասպելի նոր մեկնության փորձ, «Գրական թերթ», Երևան, 1999:

Խալափյանի հերոսը երկար տարիներ, Շամիրամի գեղեցկությամբ դյուֆված, մոռանում է Հայաստանի մասին: Սակայն դա չի նշանակում, որ Զորայր Խալափյանի կերտած Արա Գեղեցիկը հայրենիքը չի սիրում, նա ի վերջո հիշում է իր անտեր թողած երկրի մասին: Շամիրամն ու Արան որքան էլ հանդիպեն, որքան էլ սիրեն միմյանց, մնում են օտար: Արան ծանծրանում է, կարոտում իր հայրենիքը, նա ինքն իրեն նմանեցնում է վանդակում փակված թռչնակի, որին տանտերը սիրում է դայլայլի ու սիրուն փետուրների համար: Նա զգում է, որ օտար է բոլորին, և բոլորն օտար են իրեն այդ հողում: Արան օտարության մեջ, առանց իր հողի, մեռնում է, ինչպես արմատից հանված մի տնկի: Նա մեռնում է առանց հայրենի հողի: Վեպում, ինչպես և առասպելում Շամիրամը փորձում է հարալեզների միջոցով վերակենդանացնել Արային: Եթե առասպելում հարալեզները հարություն տալու կարողությամբ օժտված հոգիներն են, ապա Խալափյանի վեպում նրանք սոսկ գեղեցիկ կանայք են, որոնք տարբեր մարմնական մերսումներով են փորձում վերակենդանացնել Արային: Գրողը հարալեզներին խորամիտ նկատառումով է փոխարինել գոեիկ «առնալեզներով»՝ ցույց տալու համար, թե կիրքը, առանց սիրո, անկարող է հարություն տալ մեռյալ պատանուն: Արայի դին գողանում և բերում են հայրենիք, ձմեռն անցնում է, գալիս է գարունը, տարածվում է լուրը, թե «Հայաստանի հողը հասնելով՝ հայոց թագավոր Արա Գեղեցիկը հարություն է առել, նրան կյանք տվող հողը կրկին կյանք է պարգևել նրան, նա ելել ու քայլել է՝ մնացած ճանապարհը գնալով ոտքով ու զրուցելով իր ուղեկիցների հետ ու դիտելով շրջակայքը»: Այսպիսին է Արայի հարության խալափյանական առասպելը:

Թվում է՝ այստեղ առասպելն ու վեպը պետք է միանան, և Արան մեկընդմիջտ մոռանա Շամիրամին: Սակայն Զորայր Խալափյանը Շամիրամին նորից դնում է Արայի ճանապարհին՝ ապացուցելու համար, որ սերը միշտ հաղթանակում է մարդկային մնացած բոլոր զգացողություններին: Արա Գեղեցիկը սպանվում է Շամիրամի որդու ձեռքով, իսկ Շամիրամը, չհաշտվելով սիրեցյալի կորստի հետ, իրեն նետում է ձորը:

«Նա գնաց իր սիրեցյալին փնտրելու այն աշխարհում, ուր հետադարձ չկա, այն տունը, ուր մտնել կա, դուրս գալ չկա»¹:

¹ Խալափյան Զ., Արա Գեղեցիկ և Շամիրամ, Երևան, 1998, էջ 173:

Ընդհանուր առմամբ Խալափյանը ստեղծում է պատմական ժամանակի ու միջավայրի մթնոլորտ: Դա արվում է ինչպես պատմական դեպքերի համառոտ նկարագրությամբ, պատմական տեղանունների, ժամանակի միավորների, ամիսների, տաճարների, դարպասների հնագույն անվանումների կիրառությամբ. այնպես էլ ասորական նյութական ու հոգևոր մշակույթի, բարքերի, զենքերի և այլ ոլորտների մասին անհրաժեշտ տեղեկատվությամբ: Ի տարբերություն հանրահայտ ռոմանտիկ շատ սիրավեպերի՝ «Արա Գեղեցիկ և Շամիրամ» երկը զգայական սիրո ու վայելքի պատմություն է: Դա ունի մի քանի պատճառ: Նախ առասպելն արդեն իսկ ունի նման հիմք, որովհետև նրա բոլոր տարբերակներում Շամիրամին առաջ մղող ուժը ցանկասիրությունն է, ապա դա պատմական դարաշրջանի ըմբռնումն է սիրո մասին, հոգեկան ու ռոմանտիկ զգացումների բացակայությունը, հեթանոսական նյութապաշտությունը: Երրորդ պատճառը այսօրվա իրականության մեջ մարդկանց բարոյական ըմբռնումների ու վարքագծի վերաիմաստավորումն է, այդ ճանապարհին երևան եկող չափազանցություններն ու շեղումները:

«Արա Գեղեցիկ և Շամիրամ» առասպելը ամեն սերունդ իմաստավորում է յուրովի: Խալափյանը նոր տեսանկյունից է նայել հայտնի առասպելի դեպքերին: Նորը նրա մոտեցման մեջ առասպելից թխող հարցադրումների շեշտադրության փոփոխությունն է, որն արտահայտվել է «սիրավեպ» ժանրային անվանման մեջ: Առասպելի զանազան մշակումների մեջ գերազանցապես կարևորվել են Շամիրամի նվաճողական քաղաքականությունը և Արայի հայրենասիրությունը, իսկ Խալափյանին հուզել են պատմական անձնավորությունների զուտ մարդկային նկարագիրն ու ճակատագիրը:

Հեղինակը ոչ միայն «նոր առասպել» է ստեղծում, այլև առասպելի նոր մեկնություն է տալիս, մեզ ծանոթ առասպելին նայում է այլ տեսանկյունից:

Քանայի բառեր՝ սիրավեպ, առասպել, աստվածություն, գեղարվեստական արտացոլում, Արա Գեղեցիկ, Շամիրամ:

Օգտագործված գրականություն

1. Խալափյան Զ., Արա Գեղեցիկ և Շամիրամ, Երևան, 1998:
2. Հարությունյան Ս., Բանագիտական ակնարկներ, Երևան, 2010:
3. Ղազարյան Լ., Զորայր Խալափյանի «Արա Գեղեցիկ և Շամիրամ» վեպը, «Գրականագիտական հանդես», Երևան, 2015:
4. Քալանթարյան Ժ., Հին առասպելի նոր մեկնության փորձ, «Գրական թերթ», Երևան, 1999:

“ARA THE BEAUTIFUL AND SEMIRAMIS” NOVEL BY Z. KHALAPYAN

V. R. GRIGORYAN

Doctor of Philology, Professor

The Head of the Chair of Armenian Language and Literature

L.V. NERSISYAN

*Master's Degree, 1st Year Student at the Department of
Armenian Language and Literature of GSU*

“Ara the Beautiful and Semiramis” novel by Khalapyan is studied in the article. The novel was published in 1998. It is interpreted within the writer’s creative system, it is overestimated and evaluated in the modern literary process.

РОМАН З. ХАЛАПЯНА “АРА ПРЕКРАСНЫЙ И ШАМИРАМ”

В. Р. ГРИГОРЯН

Доктор филологических наук, профессор,

Заведующий кафедрой армянского языка и литературы ГГУ

Л. В. НЕРСИСЯН

*Студентка 1-ого курса магистратуры отделения армянский язык и
литература ГГУ*

В статье рассматривается роман З. Халапяна “Ара прекрасный и Шамирам”, который был опубликован в 1998 году. Роман интерпретируется в творческой системе писателя, переоценивается и даются оценки в современном литературном процессе.